

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

51^{րդ} ՏԱՐԻ, ԹԻԻ 34

Գ. ՇՐՋԱՆ

24 ՕԳՈՍՏՈՍ 1902

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մասիս շաբաթների ստեղծման լուրջագիտական Կ. Պոլսի համար Մասիսը իր գաղափարներով համար Յիսուսի ղր., հանձնի վճարելի: Արտատպան 12 գրանի կալ 5 տարի: Թղթատարական ծախսը խմբագրության վրայ է: Վեցամսեայ լուրջագրութիւնը լրկուեալով: Խմբագրութեան խմբագրութեանը կը սկսին առկն առկն մեկին: Մասիսը հրատարակ կ'ընէ առկն շաբաթաւոր: Այն լուրջագրութեանը որոնք պակաս քերք ստացած են, պէտք է խմբագրութեան խմբագրութեան: Ժամանակակից մեկին վերջ ալ սեւակ առկն խմբագրութեանը նկատարութեան լին առկն:

Ձի հրատարակուած ձեռագրութեանը եւ չեն բարձուի:

Ձեռք կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه ده آغوب ماطيوسيان مطبعه سنده «ماسيس» غزنه سي ادار سنده

ԽՊԱԳՐՈՒԹԻՒՆ (ՄԱՍԻՍ) Ի

Տպարան Զ. Մատթեոսեան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Rédaction de la Revue MASSIS

Imprimerie H. Matteosian

CONSTANTINOPLE

Ի Բ Ա Ն Կ Ա Լ Թ Ի

46րդ Տ Ա Ր Ե Շ Ր Զ Ա Ն

Վարժարանս հաստատուած է 1857ին . նպատակն է՝ աշակերտաց տալ կրօնական , բարոյական եւ գիտնական կրթութիւն մը : Վարժարանի վարչութիւնը՝ Վիէննայի Միւթարեանց ձեռքն է : Ուսուցչական մարմինը (corps enseignant) որ կը բաղկանայ Միւթարեանց ներքէ եւ վկայեալ արտաքին ուսուցիչներէ , պիտի կազմեն այս տարի 21 հոգի : Ուսմանց ծրագիրն է՝ արդի երկրորդական դպրոցներու (école secondaire moderne) յատուկ յառաջագիրը , որ կը համապատասխանէ գերմանական Բէալական դպրոցին (Realschule) յառաջագրին . բայց ըստ կարի յարմարցուած է այս ծրագիրը միջավայրի պիտոյից : Վարժարանիս կատարեալ ընթացքն աւարտող աշակերտները կրնան շատ զիւրութեամբ եւ առանց քննութեան ներառուիլ ու եւ է բարձրագոյն վարժարանն յաճախել՝ ուսմունքը շարունակելու համար (ինչպէս ունինք աշակերտներ ի Վիեննա , Զուրիցերիա եւ Գաղղիոյ քանի մը քաղաքները) եւ կամ կրնան վաճառականութեան ձեռնամուխ ըլլալ : Աւանդուած լեզուներն են՝ Հայ . Տճկ . Գաղղ . Գերմ . եւ Անգլ . (վերջին տարին) : Գաղղիերէն լեզուն գործնականապէս սորվելու համար՝ աշակերտները պարտաւորեալ են միշտ նոյն լեզուն խօսելու եւ իրենց վրայ պիտի հսկեն երեք գաղղիացի Մարիսոյներ , զորոնք յատկապէս բերել տուաւ վարչութիւնն Բարիզէն : Այս տարի չորս պիտի ըլլայ ասանց թիւը : Նոյնպէս գերմաներէնի համար հին ուսուցիչներէն զատ , ՆՈՐ մըն ալ բերել կուտայ այս տարի վարչութիւնս՝ Պերլինէն : Ամէն ամիս ծնողաց կը զրկուի համեմատական ամսացուցակ մը , որուն մէջ

մանրամասն կը նշմարուի աշակերտին բարոյական եւ ուսուցչական վիճակը , իւրաքանչիւր դասերու մէջ առած նիշերը եւն . : Վարժարանս կը գտնուի ընդարձակ ծառայից պարտէզի մը մէջ . ունի իր յատուկ բժիշկն եւ իր գեղարարն , 1902-1903 դպրոցական տարին պիտի սկսի Սեպտեմբեր 2/15 Բ . օրը : Գարոցամուտի քննութիւնները պիտի կատարուին Օգոստ . ամսոյն 30ին եւ 31ին , իսկ դասերը կը սկսին կանոնաւորապէս Գ . օրը Սեպտ . 3ին : Հրատարակուած է վարժարանիս Հրդ տեղեկագիրը , եւ աշակերտք կրնան առնուլ զայն ամէն օր մինչեւ կէս օր : Վարժարանիս նկատմամբ ընդարձակազոյն տեղեկութիւններ ուղղող , թող ինչդէ վարժարանի վարչութիւնէն՝ վարժարանիս ծրագիրը , եւ կամ զիմէ հետեւեալ հասցէին՝

Հ. Գաբրիէլ Վ. Մէնէվիչիան

Կ. Պոլիս, Բանկայթի

P. Gabriel Dr. Ménévichian

Constantinople, Pancaldi

Ռ Ո Պ Ե Ր Գ Բ Ո Լ Է Ճ

Վարժարանիս յառաջիկայ տարեջրմը պիտի սկսի Երկուշաբթի Սեպտ . 2/15 : Կարգադրութիւններ եղած են նոր զիւրութիւններ տալու վաճառականական ուսմանց համար : Մնայուն բժիշկ մը՝ աշակերտաց առողջութեան , մարմնամարզներուն ու խղիւրուն , ինչպէս նաեւ վարժարանին ընդհանուր առողջապահական վիճակին վրայ պիտի հսկի : Այս տարի կը բացուի նաեւ փոքր տղայոց ատկացեալ նոր շէնքը , մասնաւոր հսկողութեան տակ , ուր կարելի պիտի ըլլայ այսուհետեւ մինչեւ տասը տարեկան աշակերտներ ընդունիլ :



ՌՈՍԻԱ — ROSSIA

ԱՊՍՏՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՅԺ

Ընկերութեան դրամագլուխը , ամբողջապէս վճարուած	10,667.667 Գրուք
1901 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիչներ ու տոկոս	54 000 000 »
Երաշխաւորութեան գումար	122 000 000 »
Ապահովագրեալներուն վճարուած գումար	249 400 000 »

Կեդրոնացեալի , Ղալաթիոյ Կաթափին վրայ, Մաքսաւսն 6ին 5եղը

Ընդհ. Քննիչ
Ա. ՀԻՒՐՄԻԻԶ

Ընդհ. Գործակալ
ԹԵՈՏՈՐ ՌԵՔՐԷ



ՄԱՆԻՆ

51^{րդ} ՏԱՐԻ

— 24 ՕԳՈՍՏՈՍ 1902 —

ԹԻՒ 34

Ի ՈՎ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Ի Ի Ն

Ժողովան ծիւղակա՞ն (եմբագրական) Տ. Ա. — Դիլուս եկածներէն. Մէկը Սաքեն՝ միւսը Սաքենիկ .
ԳՐԻԶԱՆԹԻՄ : — Ժողովրդական առածներ. ՏՐԴԱՏ ԵՊԻՍԿ. ՊԱՆԵՍՆ : — Միսիրաւանգ
(Բաղաստեղծութիւն) ՏՕՄԻՆՕ : — Զոր ալիքները . ՓԱՅՆԱԿ : — Երեւ տարի Արժանքի մէջ
(Թերթոն) : — Յուշանք :

«ԳՐԱԿԱՆ ԾԻՒՐԱԽՏ»

(ԵՐԿՐՈՐԴ ԵՕԴՈՒՍԾ)

Կը չարունակեմ պրպտումներս «Գրական
կարգադրանքին» շուրջը, որ Մալխի նախորդ
խմբագրականին նիւթը կը կազմէր : Մեր նո-
րաստ սերունդին, գպրոցական պատանինե-
րուն մտաւորական ու հոգեկան արամադրու-
թիւնները առողջ ու կորովի պահելու կամ
զարմնելու ձգտող տեսութիւն մըն է տակայ,
եւ ո՛չ թէ բանաստեղծական ճշմարիտ կարո-
ւթիւնները ջլատելու, նորածիլ տաղանդ-
ները վնասեցնելու նպատակով սկսուած
քննադատական մը, ինչպէս ըմբռնած ըլլալ
կերելայ գրասէր Օրիորդ մը, — Բերայէն,
— որ կնոջական փափուկ զգացումներով լե-
րուն նամակով մը կը գանգատի թէ ի՞նչ հարկ
ապրան խիստ ըլլալ սկսնակներուն դէմ :
Նամակագիր Օրիորդը, որ չուզեր իր անու-
նին յայտնուիլը՝ ո՛չ ալ իր մտերմական զըր-
ուածքին հրատարակութիւնը, սա ներողա-
միտ եղբայրացիութեան կը յանգի թէ, պէտք
է թողուլ այդ տղաքները որ ուղածուն չափ
դնեն, մինչեւ որ կամ յաջողին եւ կամ . . .
բռնաճատին :

Նրբորդ արդիւնքը չա՛տ աւելի դժուար
է սակայն քան առաջինը, ու վեհասարկ կեր-
պով կազդէ պատանիներուն բնոյհանուր դաս-
տարակութեանը վրայ, անոնց բոլոր ուշադ-

րութիւնը սեւեռելով դէպ ի միակ նպատակա-
կէտ մը, միակ բաղձանք մը, — իրենց ուսա-
նաւորներուն հրատարակուիլը եւ բանաստեղծ
ճանչցուելին : Անգամ մը որ գպրոցականը
կամ չըջանաւարտը բռնուի այս մղձաւանջէն,
ա՛լ ուրիշ աշխատութիւն, ուսմունք, ար-
ուեստ, նշանակութիւն չեն ունենար իրեն
համար : Օրինակները հազուադիւրէն չեն, եւ
ընտանեկան խաւերու մէջ եթէ փնտռուք
մը ըլլայ այս նպատակով, ծնողքներու ան-
վերջ գանգատները պիտի յաջորդեն իրարու :

Յաջողութեան պարագան, իրապէս օժ-
տուածներուն համար, աւելի զիւրին է ըսի՝
քան անկարողներուն յուսահատութիւնը : Եւ
արդարեւ, Պոլսեցի կամ գաւառացի այն երի-
տասարդ բանաստեղծները, որոնք — վերջին
քանի մը տարիներուն վրայ միայն խօսելով
— սկսած են իրենց տեղը ունենալ մեր շա-
րակական կամ կիսամեկայ Հանդէսներուն
մէջ, գողարիկ, սիրուն ուսանաւորներով,
առանց ո՛ր եւ է յանձնարարութեան, առանց
խախտնձագլին նամակներու, առանց տաղու-
կալի հետապնդումներու է որ ստացած են
մուտքի այդ իրաւունքը : Ծանօթ անուն մը
չունենալով, ոչ ալ անձով ծանօթ ըլլալով
խմբագրութեանց, առաջին անգամ ուսանա-

ւոր մը զրկած են թերթի մը ու յաջորդ շաբաթուն հրատարակուած տեսած են զայն : Ինչէ՞ն այս զիւրին հիւրընկալութիւնը . որովհետեւ գրուածքը ինքնին բան մը կ'արժէր , հակառակ իր մանր մունր թերութիւններուն , եւ , գրողը՝ բան մը ըլլալ կը խոստանար : Առաջին քերթուածին կը յաջորդէ երկրորդ մը աւելի խնամուած , ու այսպէս մատուցական հաղորդակցութիւն մը , մտերմութիւն մը կը հաստատուի թերթին խմբագրութեան ու նոր աշխատակցին միջեւ , մինչեւ որ օր մը ճանչնան զիրար , մինչ՝ միեւնոյն ատեն՝ ընթերցող հասարակութիւնն ալ կը սկսի հետաքրքրուիլ այդ գրական ծածկանունին կամ իսկական ստորագրութեանը :

Օրինակներ զիւրին է յիշել նորերէն ու նորագոյններէն , երէկ անծանօթ՝ այսօր ճանչցուած իրենց ոտանաւորներովը կամ արձակ քերթուածներովը : Բայց որովհետեւ «Գրական Ծիւրախա»ի սահմանէն դուրս կ'իյնայ յաջորդածներով , անուններով զրադիլ , զանց կ'ընեմ : Այսքան բացառութիւն կամ չեղումն ալ՝ լուսաբանելու համար Բերայի Օրիորդը որուն պէս մտածողներ գտնուին թերեւս մեր ընթերցողներուն եւ ընթերցողուհիներուն մէջ :

Ոտանաւորներուն ընկերացող նամակները , սովորաբար , այն տեսակ տարօրինակութիւն-թիւններ կը պարունակեն որոնք կանխակալ կերպով աննպաստ կարծիք մը գոյացնել կուտան իսկոյն կարդացողին մտքին մէջ՝ ոտանաւորին վրայ աչք մը չածելու աստիճան : Նմոյշ մը այս catégoriէն .

Կաւառային քաղաքէ մըն է որ կը հասնի նամակը , երիտասարդի մը կողմէ որ նախապէս զրկած իր մէկ ոտանաւորին չի հրատարակուելէն . . . քաջալերուած՝ սիրտը կը բռնայ :

Այդ առաջին մկրտմը զիս չի կանոններ . երկրորդ փորձս կամ փորձերս կ'ուղարկեմ ձեզ այս անգամ . հոգ չէ թէ չհրատարակուին անոնք . հերիք է որ քերթողական ապարէզէն զիս ուժգնապէս հետաքննելու կարող ըլլան : Ձեր երկրորդ լուծիւնը զիս լուծեան պիտի դատաւարտէ կանուխ , ու ես պիտի ստիպուիմ այլուր փնտռել արժանաւոր արդիւնքը թարմ ջանքերուս , փոխանակ ի զուր վատնելու զանոնք :

Այս յայտարարութիւնը կարդացող մը պիտի մղուէր մտածելու թէ «իբ թարմ ջանքերուն արժանաւոր արդիւնքը այլուր փնտա-

ռել» մտադրող երիտասարդ բանաստեղծը ուրիշ թերթի մը պիտի զրկէ ոտանաւորները , լաւագոյն հիւրընկալութեան մը ակնկալ : Յաջորդ տողերը հակառակը կ'ապացուցանեն , սակայն , սրտայոյզ որոշում մը հաղորդելով .

Ոտանաւորներս , որոնց թիւը մէկ երկվեցեակի տասնէ քաջ , մտադրած եմ այրել , անկորոշութեան ապացոյցը վերջնականապէս ձեռք բերելէ վերջ : Այն ատեն , պիտի ստիպուիմ հրաժեշտ առնուլ քերթողական ապարէզէն . . . ցտեսութիւն (է՛հ , թերեւս) մաղթելէ վերջ , որով պակասը պիտի ըլլար ձեր զլխու ցաւանքներէն մէկը :

Ոտանաւորները այրե՛ն . . .

Այս օրօ քաժեհի սպառնալիքը առաջին անգամ անգամը չէ որ կը կարդամ՝ հրատարակուելու համար զրկուած ոտանաւորներու ընկերացող նամակի մը մէջ , եւ անշուշտ ուրիշ խմբագիրներ ալ անոր համը առած են :

Պէտք է խոստովանիլ որ սրտի զպող բան մը կայ այս գերագոյն որոշումին մէջ , եթէ երեք անկեղծ է . բայց նոյն իսկ անկեղծութեան պարագային , շատ ածապարի չէ՞ «մէկ երկվեցեակ» — կամ հասարակ բառով՝ առաներկու — ոտանաւոր արտադրէ՞ն ետքը , կա՞մ բանաստեղծներու կարգը գառուիլ ուղել եւ կամ դառնացած հրաժեշտ ապարէզէն : Ի՞նչ հարկ այս խղճաշարութիւնը պատճառել հրատարակիչներուն , թէ ապագայ բանաստեղծի մը ապարէզին խոր տակման պատճառ պիտի ըլլան իրենց մեր ժուռովը կամ լուծթեամբը : Վասն զի , անանկներ ալ կան — միշտ ոտանաւոր գրելու սկսողներուն մէջ — որոնք պատասխանի կը սպասեն , վրայ չէ թէ այդ պատասխանը մերժում մը ըլլայ եւ զրադուծիւններ պատճառակէ :

Եթէ տասը-քսան ըլլային այդ բանաստեղծական նախափորձերը , թերեւս կարելի ըլլար գոհացում առլ այս պահանջումին , եւ օգուտ մըն ալ ծագէր անկէ . բայց երեւօ կայեցէք որ տարուան չըջանին մէջ հարկը կ'անցնի անոնց թիւը — միմիայն Մանիս խմբագրութեան հասածները . — եւ զանոնք մէկիկ մէկիկ քննելու , լաւ ու յոռի կողմերը նոթագրելու համար , կատարեալ ձեռնհասութեան ու լայն ժամանակի պէտք կայ : Թի՛ պիտի ատանան այս համբերատար ու երկարաշունչ աշխատութիւնը :

Տ. Ս.

ՅՈՒՇԱՏԵՏԻ



Կայս. Գահակալութեան բարեբաւարի տա-
րեղարձին առթիւ երկուշաբթի առաւօտ Մայր
Յինդեղոյ մէջ կատարուած գոհաբանական
անդիսաւոր մաղթանքէն յետոյ, որուն նա-
խագահեց Ս. Պատրիարք Հայրը եւ քարոզ
խօսեցաւ, Ն. Ամենապատուութիւնը Կայս.
Պալատ գնաց՝ Հայ Ազգին հաւատարմական
զբացումներն արտայայտող Ուղերձ մը մա-
տուցանելու, Օրմանեան Ս. Պատրիարքը
Սիւսի Հոգեւոր Պետերուն հետ՝ պատիւ ունե-
ցաւ ներկայանալու Վեհ. Սուլթանին, Յու-
նաց Ս. Պատրիարքը, ի դիմաց բոլոր Հոգե-
ւոր Պետերուն, շնորհաւորական Ուղերձ մը
կարդաց, որուն բարեհաճեցաւ պատասխանել
Ն. Կ. Վեհափառութիւնը. — « Կարգացուած
ուղերձէն եւ յայտնուած զգացումներէն մե-
ծապէս գոհ եմ. ապահով եղիք որ Ձեր
ժողովրդոց հանգստութեան ու երջանկու-
թեան համար պիտի ըլլան միշտ իմ կամքս
եւ հրամաններս : Ինչպէս մինչեւ հիմայ ա-
մենայն հաւատարմութեամբ իմ Գահուս ծա-
ռայեցիք, նոյնպէս յարատեւեցէք : Կ'արտօ-
նեմ զՁեզ՝ իմ Կայսերական բարեւնեքս հա-
ղորդել Ձեր ժողովրդոց » : — Ս. Պատրիարքը
եւ միւս Հոգեւոր Պետերը ջերմ բարեմաղ-
թութիւններ ըրին Վեհ. Կայսեր արեւշատու-
թեանը համար : Յետոյ, ընդունելութեան
գովիձէն ելնելով, արարողապետ Իպրահիմ
պէյի կողմէ առաջնորդուեցան ուրիշ սենեակ
մը ուր կրկին մեծարանքներ եղան :

— Տ. Բարթողիմէոս եւ Տ. Հմայեակ
Սրբազանները՝ իրիւս նախկին Տեղապահներ,
ինչպէս նաեւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս
Սուրբասեան երկուշաբթի օրը Կայս. Պալատ
գացին եւ Բարձր. Հաճի Ալի փաշայի ձեռամբ
շնորհաւորական ու բարեմաղթական Ուղերձ-
ներ մատուցին յոռոս Կայս. Գահոյից :

— Երկուշաբթի գիշեր, շքեղապէս լու-
սապարտած էին Ազգ. Պատրիարքաբանը,
Յուսաղէմատունը, Ազգ. Հիւանդանոցը,
մայրաքաղաքիս բոլոր եկեղեցիներուն գուռ-
ները, ինչպէս նաեւ Ս. Պատրիարք Հօր
բնակարանն ի Բերա, Տ. Բարթողիմէոս

արքեպիսկոպոսի տունն ի Պէյքօղ, եւ կա-
ռավորական բոլոր հայ պաշտօնատարներու
բնակարանները :

— Երկուշաբթի օրը, Ս. Պատրիարք Հայրը
եւ միւս Հոգեւոր Պետերը, իրենց շնորհուած
Կայսերական ընդունելութենէն ետքը, այցե-
լութիւն տուին Ա. սենեկապետ Հաճի Ալի
փաշայի, Ա. քարտուղար Թահսին փաշայի եւ
Բ. քարտուղար Իզզէթ փաշայի, եւ շնորհա-
ւորեցին Նոյնին Բարձրութեանց շնորհուած
Վէզիրութեան աստիճանը :

Կայս. զնահատում. — Վեհ. Սուլթանը
բարեհաճած է ականակուռ Մէճիտիյէ պատ-
ուանշան շնորհել Ներքին գործոց նախարա-
րութեան խորհրդական Վսեմ. Ֆուատ պէյի,
ի նշան իր Կայսերական բարձր գոհունակու-
թեան՝ այն բարւոք ծառայութեանց համար
զորս Ն. Վսեմութիւնը կը մատուցանէ իր
փափուկ պաշտօնին մէջ, անդադար ի յայտ
բերելով վարչական մեծ կարողութիւն :

— Ն. Կ. Վեհափառութիւնը՝ գնահատելով
Տոքթ. Պապանի փաշայի կարողութիւնը եւ
մատուցած ծառայութիւնները, բարեհաճած է
Միւրիմիրանի աստիճան շնորհել անոր :

Երուսաղէմի Պատր. Փոխանորդ Տ. Գէորգ
եպիսկ. Երէցեան երկուշաբթի առաւօտ յա-
տուկ պատարագ եւ պաշտօն մատոյց Ս.
Փրկչի մատարան մէջ՝ Տիկին Երանուհի Բար-
թող պէյի ննջեցեալներուն հոգւոյն, եւ քարոզ
խօսեցաւ : Եկեղեցական արարողութենէն
ետքը, Տիկին Բարթող պէյ չըջեցաւ Հիւան-
դանոցի բոլոր յարկերը եւ ի յիշատակ իր այս
այցելութեան՝ ինքնաբերաբար խոստացաւ
Հիւանդանոցին համար պէտք եղած բրինձը
հոգալ տարուէ տարի : Այցելեց նաեւ Որբա-
նոցը եւ 20 ոսկիի նուէր մը ըրաւ :

Կիլիկիոյ Կաթողիկոսական բնարութեան
համար Ատանայի մէջ գումարելի ընարողական
ժողովը իր առաջին նիստը պիտի ընէ Վարա-
գոյ Խաչի Կիրակին, 29 սեպտ., ինչպէս կը
հաղորդեն օրաթերթերուն հասած թղթակ-
ցութիւններ, մանրամասնաբար նկարագրելով
Տ. Մովսէս եպիսկ. Կէօմրիւքճեանին եղած
յարգալիր ու սիրալիր ընդունելութիւնը թէ՛
Մէրսինի եւ թէ՛ Ատանայի մէջ :

ԳԼԽՈՒՍ Ե ԿԱԾՆԵՐԷՆ

ՄԵԿԸ ՍԱԹԷՆ՝ ՄԻՒՍԸ ՍԱԹԵՆԻԿ

Անգամ մը , շատ տարի առաջ , Գուժ-
դարու , Ֆըշըճի փողոցը , սուտոէի երթալ մը
ունիմ . կ'արժէ որ պատմեմ :

Անշուշտ զիտած էք , Անգլիացիներ կան
որոնք իրենց երկիրը , ընտանիքը , Հայա-
Բարքը , Քօլընդ-Կարաքը , Ռիճընդ-Սթրիթը ,
իրենց հանգստութիւնը , ճոխութիւնը , con-
fortը , վերջապէս իրենց սիրելիները եւ sweet
homeը կը թողուն , այդ խելօք ազգարները ,
եւ ամէն վտանգ աչք առնելով՝ կը մեկնին
դէպի Ափրիկէի խորերը , աշխարհագրական
քարտէս մը ի ձեռին եւ չիլ մը E'no's Fruit
Salt գրպաննուն մէջ , երթալ տեսնելու հա-
մար թէ ուր կը սկսի Նեղոս գետը եւ կամ
ինչպէս կ'ըլլայ փիղի մը աղաբերքը . . . ա-
ռանց մամիի :

Ես ալ՝ անոնց պէս՝ հետաքրքիր էի զիտ-
նալու թէ սուտոէ մը ինչպէս կը տրուի Գուժ-
դարու , Սամթիա եւ կամ Սալմաթիմուրք :

Բարեկենդանի շաբաթ իրիկուն մը կրցայ
փափաղս իրագործել՝ առանց պէտք ունենա-
լու ո՛չ P & Oի չողենաւներուն մէջ , ոչ Բա-
քէի գործակալութեան եւ ոչ ալ Պէտէյքըրի
ուղղեցոյցին :

Թէ ինչպէ՞ս , ինչո՞ւ , ի՞նչ կերպով եւ
ի՞նչ պայմաններու տակ գացի այդ երեկոյ-
թին , ամբողջ պատմութիւն մըն է զոր ման-
րամանորէն այս էջերուն մէջ վիպերուս հա-
մար անշուշտ թոյլառութիւն պիտի տան
ինծի Մախիսի ներդաժմաւ ընթերցողները :

Միակ Գուժ-դարուցին զոր կը ճանչնայի՝
Սամիկ անունով երիտասարդ մըն էր որ քեզ-
կեանքսարի պաշտօնը կը վարէր այն վաճառա-
տան մէջ ուր ես անօրէնի պէս բան մըն էի :
Կանաչի արդուգարդի յատուկ ապրանքներու
առեւտուրով զբաղող այդ վաճառատան մէջ
սէրը , անօրէնը եւ քեզկեանքսարը ձեռք
ձեռքի տուած , կատարեալ խղճմտութեամբ

կ'աշխատէինք կարելի եղածին չափ շուտ
առաջ տանելու համար խանութին . . . Կոր-
ծանութիւն : Եւ անանկ ալ եղաւ . բայց այդ
մանրամանութիւններուն պէտքը չկայ հոս ,
չէ՞ :

Type մըն էր այդ Սամիկը , Musée Grévinի
մէջ ցուցադրուելիք type մը , ոչ աւելի ոչ
պակաս :

Ունայնամիտ՝ ինչպէս ոչ ոք , եւ ինքնա-
հաւան՝ քառուսն Իւսկիւտարցիի չափ , ալքո-
լով լեցուն սրուակի մէջ դրուելիք երիտա-
սարդ մըն էր մեր Սամիկը : Երեւակայեցէ՛ք
կարմիր , կաս կարմիր ֆէսի մը տակ ապուշ
ապուշ ձեզ նայող գոյգ մը խաժ աչքեր՝ ամ-
բարտաւանօրէն մեծկակ . ուղուքներ՝ որոնց
մէջէն Սառգեղի շողենաւ մը պիտի կնար
անցնիլ համարձակ . փակցուցէք ատոր տակ
հաստ , չիկադոյնի զարնով անտանելի կերպով
խարտեալ պիտի , քօզմէթիքի ծեփով մը
վերամբարձ , պիտի որոնք իրենց հովանա-
ւորութեան տակ կ'առնեն բերան մը որոն
չրթիկը իրարու սօսինձով փակցուած ըլլալը
պիտի մաղթէիր թող չի տալու համար որ նոյն
իսկ բառ մը դուրս ցայտէր ձայնի եւ չունի
այդ ձաղաքէն , եւ պիտի ունենաք inventaire
Սամիկին գլխուն , զոր մարմնէն անջատելու
համար՝ անբացատրելի գոյներով փողկապ մը
վզին փաթակելու սովորութիւնը ունէր ճէշ
աղան որ միւսեւոյն տանն չէի ալ էր :

Հայերէնս կարճ ըլլալուն եւ աղղղութիւն-
ներ որակող բաժանիներուս պաշարը համետ,
սկիւտայ կը հրաժարիմ նկարագրելէ իր կազ-
մուածքին մնացեալ մասերն ալ , զորս լաւ մը
թուելու համար vétérinaireի վկայական մը
չունենալուն շատ կը ցախիմ :

Սակայն ինքզինքը անանկ բանի տեղ դրած
էր որ . . .

Կեղծ քարով մասնի մը մասը , կուրծքին

փայ ճուղիք չղթայ, կէս բամպակ՝ կէս մե-
տաքս հովանոց մը ի ձեռին, ֆեհրիպուր քա-
լիքներ ակուններուն տակ, անանի հպարտ,
անանի վէս քալուածք մը ունէր սրուն ի
սեւ՝ շատ անգամ՝ կը փորձուէի ապտակ մը
իջնել իր anémique այտերուն վրայ:

Ինչ որ ամէնէն շատ ջիւղերս ոտք կը հա-
նէն, մէյ մը իր փողկապին կնձիկն էր, մէյ
մը ալ դրամապահակը: Սամիկ ոսկերիչ բա-
րեկամի մը ձեռքով շինել տուած էր իր ֆու-
փարին քօշիղուն, այլանդակութեան գլուխ
դրոց մը: Մէկը ոսկիէ եւ միւսը արծաթէ
եղև տատարակներ էին տառնք, մարգարիտ
նալիքներ պարունակող բոյնի մը եզերքնե-
րուն թառած՝ ուր զիրար կը կայէին գգուան-
քով:

Հապա դրամապահակը, ո՛հ այդ քօրթ-
մեմը: Ատի մը չափ մեծ, մարօքէնէ քսակ
մը էր ինքնաշարժիկ եւ մեքենական կըզ-
գանքով որուն գաղտնիքը Սամիկ՝ ինքը
կայն գիտէր: Յատուկ truc մը կար այդ
քօրթմենը բանալու համար: Նախ աջ ձեռ-
քով այդ քսակին պարունակութիւնը մէյ մը
ալ եւ մէյ մը ձախ կը ցատկեցնէր. վերէն
կար եւ քովեւ կերպով ցնցում մը տալէն
փրկէ անոր, կէս չըջանակ մը ընել կուտար
այն մէջ եւ դրի՛ֆ, քօրթմենը կը բացուէր:
Այս արարողութիւնը կատարելէ վերջը, Սա-
միկ աչքերը չորս կողմը կը պտտցնէր տե-
նելու համար թէ իր այդ մարիֆեթին վրայ
կառող galerie մը չէ՞ կազմուած արդեօք
լուրջ, եւ ըսել թէ այս պաղղաւակ մանուշ-
տան տանն անգամ, հարիւր անգամ կը կըրկ-
նուէր աչքիս առջեւ օրն ի բուն:

Ամէն մեղքիս վրայ այդ աղան ձեռնոց ալ
կը գործածէր երբեմն, այցեքարտեր ունէր
փրկող գրպանին մէջ, ասշէ մը թղթապահա-
կին խորը, եւ կիրակի օրերը լամբակին կան-
գնէր Պոն Մառչէէն գնուած պղտիկ արհես-
տական վարդ մը, պոռպուտ կարմիրով մը ներ-
կուծ:

Անո՛ր ինչ տեսակ սարուփարթայով (atti-
tude) ինքզինքը կը պտտցնէր մընջճի փողոցի
այդ coqueluche:

Հապա չէ՛ք ըսեր, մեր Սամիկը երկու
աւալ խօրթի ունէր, մէկը իր փողոցին մէջ

եւ միւսն ալ Պատրիարքարանին ետեւի կողմը:
Եւ անբացատրելի զուգահիստութեամբ մը,
մէկուն անունը Սամիկն էր եւ միւսինը՝ Սա-
թիկնիկ:

Իր թաղին մէջ տեսակ մը Մաքս Լըպօտի
էր մեր Սամիկը, հապա ի՞նչ:

Ահա այդ չնաշխարհիկ տղուն տանը մէջ
արուելիք պարանցիկ երեկոյթին հրաւիրուած
էի Բարեկենդանի շաբաթ իրիկուն մը:

* *

Ինչպէս վերը ըսի, անգաղելի փափագ մը
ունէի այդ տեսակ սուսառէի մը ներկայ գըտ-
նուելու, եւ ահա առիթը իր ոտքովը եւ Սա-
միկին բերնովը ինձի կը ներկայանար. պա-
րագայէն չօգտուել անխելքութիւն պիտի ըլ-
լար իմ կողմէս, մանաւանդ որ խելօճ աղան
խոստացած էր իր երկու Սամիկները ներկա-
յացնել ինձի այդ իրիկունը:

Իրենց լուսանկարներէն դատելով, եթէ
ոչ Սամիկնիկը, բայց ապահովապէս Սամիկը
փառաշատ պատառ մը ըլլալու էր: Եւ, յետոյ,
քանի քանի անգամներ սիրատու ըստեկամ
բերնիս ջուրերը վազցուցած էր մանրակրկիտ
տեղեկութիւններ տալով այդ աղջկան ֆիզի-
քական բարեմասնութեանցը վրայ:

— Ծուրի պէս ֆրանսրգճա մը կը զուրցէ
քի, չէր մոռնար աւելցնելու Սամիկ, ամէն
անգամ որ գովասանքը կ'ընէր Պատրիարքա-
րանի ետեւի փողոցին աղջկանը:

Մէկէ աւելի էին պատճառներս, այդ շա-
բաթ իրիկունն անհամբեր սպասելու:

Արդէն տասնըհինգ օր առաջուց՝ Սամիկ
պատրաստութիւններ տեսնելու վրայ էր կա-
րելի եղածին չափ փայլուն ընելու համար
այդ երեկոյթը որ ի պատիւ ինձի պիտի տրուէր,
թոյլ տալու համար իր թաղին ծանօթներուն՝
de visu ճանչնալ Բրիգանթէմը, որուն դըր-
ուածքները շատ կը հետաքրքրեն եղբւր Սա-
միկի բարեկամական չըջանակին մէջ սեղ-
մուած երկու սեռէ ընթերցողներ:

Ամէն իրիկուն, հինգ վեց օր շարունակ,
բաքէթներ կը զրկէր տունը եւ օրը տասն
անգամ Գուռ-գարուցի երիտասարդներ կը
հանդիպէին մեր վաճառատունը, Սամիկին ա-
կանջն ի վար բաներ մը փափաղու համար:

Խանութին մէջ ամբողջ շաբաթ մը ահա-
զին տակնուվրայութիւն մը, աննկարագրելի
բարբոթք մը եւ անընդհատ երթեւեկութիւն
մը կար. ի՞նչ է. Միւսիւ Սամիկը երեկոյթ
մը պիտի սարքէ եղեր :

Վերջապէս երանելի շաբաթ իրիկունը հա-
սաւ :

Խանութը գոցելնուս պէս, կամուրջին
դուռը իջանք եւ կառք մը նստելով գացինք
չիտակ Օրթա խահվէն, Գուս-գալուսի Cen-
trale :

Օղիի մասնաւոր սեղան մը պատրաստուած
էր հոն Միւսիւ Սամիկին եւ իր քանի մը
բարեկամներուն համար :

Ամբողջ եւ կատարեալ ցուցահանդէս մը
աղանդերներու, խառն ի խառն, իրար չի
բռնած, իրարու հայհոյող աղանդերներ՝ վաճ-
րիկ պնակներու մէջ զետեղուած :

Խաւկարին քով թարմ սեր, ձկնկիթի
պատառիկներու մօտիկ՝ շերտ մը սերկեւիլ,
սարսկըային դրացի՝ ֆեսսէ մը մածուս, պա-
նիրին կրթնած՝ պնակ մը նուշ, քերաքուռով
ոշոյղուած կտոր մը ձուկին ճիշդ դէմը՝ հառ-
կուած նուս մը, եւ անխուսափելի ջահաւա
թուրջուսուիին քթին տակը պնակ մը պիւ-
տակ : Այդ ամէն մերթ ահուշ եւ մերթ կծու
կամակներուն դեռ ձեռք չի դպցուցած, ար-
դէն ներսիդիս նողկարար ելեւէջներ կը զգայի,
մանաւանդ որ օղիաբանութեան մէջ խիստ
չէզոք դեր մը կատարող մէկն էի, ի միւս զար-
մացումն առատօրէն խմող ընկերակիցներուս :

Ժամ առաջ տուն երթալու համար, շա-
րունակ Սամիկին ոտքին վրայ կը կոխէի,
բայց որո՞ւ կ'ըսես, աւանակը խմելու զբա-
ղած՝ կը մոռնար թէ հոգիս կը նեղանար կոր
այդ սաղակահուած մթնոլորտին մէջ :

Անգամ մը երբ ճարահատ՝ սաստիկ կեր-
պով կ'սխեցի ոտքին, կ'ուզէ՞ք որ Սամիկս
ինձի դառնայ եւ յայրատ Ժպիտով մը՝

— Միտքս պան մի՛ ձգեր, պէ՛,

Հսէ ինձի :

— Ի՞նչ բան :

Եւ ահանջս ի վար՝

— Սկսանքի խաղանք նէ աւ ալ տատան
կ'ընէ :

Ան ըսելով Սաթէնը ըսել կ'ուզէր դոմէ՛շը,

Երկար չընեմ, մինչեւ որ տունէն լուր
չեկաւ, անդերնուն, չեղան Սամիկը եւ իր
արբանեակները :

Իրարմէ գատուած միջոցնուն լսեցի երեւ
տատարգ մը որ իր քովինին կ'ըսէր, արմու
կովը զիս ցուցնելով :

— Ասոնք քիւրար կ'ըլլան, Շամբանեա
կը խմեն . . . զուռո՞ւպ :

Հինգ վայրկեան վերջը տուն հասանք :

Չորս կողմը ճրագ կար : Սամիկին քայրքը
եւ պառակուկ մայրը անկեղծ մեծարանքով
ընդունեցին զիս : Իմ մէջս թէ՛ Քրիզանթէմը
կար եւ թէ՛ խանութին տնօրէնը, հետեա-
բար չորս կտոր կ'ըլլային կոր, խեղճերը,
արժանավայել պատիւներ ընելու համար իմ
կրկին հանգամանքներուս :

Բաւական թուով հիւրեր կային ճաշի
հրաւիրուած, ազգականներ, մօտ բարեկա-
մներ եւ վերի խաթի ֆիւրաճին՝ մօրմէ մը,
աղջիկէ մը եւ կտորիճէ մը բաղկացած պար-
կեշտ ընտանիք մը :

Մեծ ապերախտութիւն պիտի ըլլար իմ
կողմէս, եթէ յարգանքով չի խօսէի այդ հայ-
կերայթի մասին ուր արեւելեան կերակուրներ
համեղ եւ տեսակ տեսակ իրարու կը յալը-
դէին՝ խեղճուկ եւ rococo սպասներու մէջ սա-
կայն : La plus jolie fille du monde ne peut
donner que ce qu'elle a. Ուստի յանցանք մը
չէր իրենց համար՝ եթէ Քրիսթոֆիլ գործա-
րանէն չէին կրցած բերել տալ այդ սպանները :

Աս աղէկ, բայց ի՞նչ այլանդակ բան էր
Ֆրանսերէն լեզուով ճաշացուցակը զոր Սամի-
կին մէկ բարեկամը, Մայր Եկեղեցիի դպրո-
ցէն նախկին շրջանաւարտ եւ այժմ ճիւղա՛ր
ոսկերիչներու շուկան, յանձն առեր էր պատ-
րաստել :

Ես երբեք ներքնապէս այդքան խնդացած
չունէի, կ'երդնում ձեզի : Այդ ճաշացուցա-
կին Ֆրանսերէնը հրաշալիք մըն էր պարզա-
պէս :

Մեղք որ ամէնքը միտքս պահած չեմ,
ուրը տասը տարի կ'ըլլայ կոր անկէ ի վեր :

Մինակ առջևի՛ առողջ կը միշեմ, եւ ասի-
կայ արդէն բաւական է մնացեալներուն վրայ
չինիչ գաղափար մը տալու ձեզի :

Ամէն menսներու պէս, առաջին առողջ
ապուրը կ'որակէր :

Սամիկինց menuն սապէս կը սկսէր .

Soupe bien élevée . — Ի՞նչ է եղեր , գի-
տէ՞ք , սաիկա , — թերպիթի չօրպա ! :

Աւասիկ ձեզի ապուրի տեսակ մը որ
Paillardին քովն ալ չկայ :

Դաւաթներ պարպուեցան ասոր անոր կե-
նացը , ձաշացուցակը խմրագրող ճիշաճին ,
աղէկ կը յիշեմ , զրաբառախառն toastով մը
բաժակ առջարկեց հայ գրագէտներու կե-
նացը :

Դեռ վեր չեղած՝ երիտասարդները քանի մը
սեղանէն շարժին երգեցիկն դուրսը , բակին
մէջ :

Տանտիրուհոյն մէկ հրաւերին վրայ , դար-
բափող սանդուխէ մը վեր ելլանք , տան
տալին յարկը , ուր կը գտնուէր հիւրանոցը ,
Բաւական ընդարձակ սրահ մըն էր սու-
րահն , որու մէկ անկիւնը կը գտնուէր միսա-
կիի սենեակը , ուր սուռառէն պիտի սկսէր
պաշտօնապէս :

Կամոց կամոց հիւրերը գալ սկսան :

Ժամը 3 1/2ին սուֆային եւ սալօնին մէջ
սիրող ոգեւորութիւնը կատարեալ էր . ներսը
սալօնին մէջ կիները ժողվուած էին եւ դուրսը
կիսի մարդիկ :

Երկու աքօրաէօններ , փոխն ի փոխ իրենց
սփանջ պատռուող ճիւղերը կ'արձակէին եւ պա-
րիս մարմաջը կը դնէին երկսեռ երիտա-
սարդութեան ոտքերուն մէջ :

Եկեքս միտքս Սաթէնին գացած էր զոր
պարպակը այս տակնուվրայութեան մէջ
լը փնտռէի :

— Սամիկ , ֆուլիկն ո՞ւր է , ըսի , երբ բա-
րիկամ միջոց մը քովէս կ'անցնէր :

— Նա՛ պէ՛ , ներսն է , եկուր քեզի թրե-
քանք ընեմ :

Եւ իրաւ ալ զիս սալօնը առաջնորդեց ու
քովէ քով նստող երկու աղուսրիկ աղջիկնե-
րու ոտքերուն առջեւ աթոռի մը վրայ նստե-
լով :

— Ի՞նչ է , միւսիւ Բրիգանթէմը աս է ,
բաւ :

Պ. Քրօզիէ ասկէ աւելի քաղաքավար
կերպով չպիտի կրնար ներկայացնել : Բայց
որո՞հ հող , ատանկ բարակ բաներ փնտռու-
միս չէի հող , բաւական է որ զիս այնքան

մօտ դրած էր այդ աղջիկներուն սրտնց մէկին՝
Սաթէնին սրունքներուն կը զգլէին իմիններս ,
առանց ուզելու , առանց գէշ միտքի :

Սենեակը այնքան նեղ էր եւ բազմու-
թիւնը այնքան չատ

Ամէն քանէ առաջ սանկ մէյ մը չորս կողմս
նայեցայ :

Սենեակը ուր կը գտնուէինք սալօնն էր ,
ինչպէս ըսի :

Ճերմակ պստանալով ծեփուած պատեր ,
մերկ տախտակամած մը , երկու պատուհան-
ներ , մէկ դուռ մը , ելիք մը . ահա՛ սենեա-
կին ամբողջ ճարտարապետական մասը :

Իբրեւ կտրասի , մէկ պատէն միւս պատը
երկայն սեփիւր մը , ձիւնի պէս ճերմակ լա-
թերով ծածկուած , սեփիւրին դիմացը ընկու-
ղենիի պուռօ մը վրան երկու լամպայով ,
մէջտեղը պղինձէ կարմիր մանդաղ մը եւ քանի
մը աթոռներ ասղին անպին , Հիւնիսիւրէ մը
կար դրան եւ ելիքին մէջտեղ , երեք բաժա-
նուով : Առաջին ռափին վրայ դրուած էր
ոսկեգօծ ապակիէ գաւաթ մը՝ զլխովար , քովը
դեռ չաւարտած քրօշէ ձեռագարծ մը եւ աղօ-
թագիրք մը : Երկրորդ յարկը Սամիկին ֆէ-
սին խալիպը , կարմիր թուղթի տակ առ-
նուած , մազի սանար մը , քօզմէթիքի կտոր
մը , parfumerieի փօքրիկ սրուակ մը՝ mikado
ձեռքի պղտիկ հայելի մը , եւ առաջին տեսակէ
սիկառէթի տուփ մը որ անշուշտ պարապ ըլ-
լալու էր :

Իսկ էն վերի յարկը թաղար մը , մէջը
արհեստական ծաղիկներ բուրդէ շինուած եւ
թաղարին քովիկը կծիկի պէս բան մը որ
կարծեմ ծրար մըն էր ուր տունին աղջիկները
սանտրուած ատեննին թափած մաղերնուն
թելերը կը պահէին :

Պուռօին վրայ , զոյգ մը լամպայէն գտա ,
ծխախոտի աման մը եւ խոշոր տուփ մը խեցիէ
շինուած , լամբաներուն ստորոտը երկու հաւ
en miniature կարմիր գգակներ որոնք կար-
ծեմ ցերեկը լամբաներու շիշեներուն վրայ կը
դնեն այդ կողմի անեցիկները : Այս ախուր
décorին մէջ սակայն աղամանդի պէս կը փայ-
լէին Սաթէնն ու Սաթենիկը :

Մնացեալ կիները՝ Էֆօրիկներ , Մէօհրիւ-
պէներ , Մէնաուֆներ , Ալէմներ , Բուլանթի-

թոները այնքան մօտ դրուած էին իրարու
— հասկցնելու համար իրեն թէ արտայայտել
փորձած սէրս անկեղծ էր եւ անապակ :

Սամիկը այլեւս գոյութիւն չունէր ոչ ինծի
համար եւ ոչ ալ Սաթէնին համար :

Սենեակին մէջ քիչ մը առաջ գտնուող
Մէծօրկայէններու stockը դուրս թափուած էր
պարսիկները դիտելու համար , այնպէս որ մի-
նջ մը միս մինալ գտնուեցանք ան ու ես :

Առթիւն օգտուելով պառոտին առջեւ տարի
քիչքը եւ խեցիէ չինուած առ փը դիտել տա-
լա պատրուակով , բերնովս չի կրցած լա-
ցատրածս չրթներովս հասկցուցի :

Կողմէք որ մուրուրի մեր այդ վայր-
կեանին , միւս Սաթէնիկը , Սամիկին sur-
noménaire սիրուհին , թիւ երկրորդը , վրայ
հասնի եւ ժամանակ չի տայ մեզի սքողելու
մեր այդ աննշան contrebander :

— Արդէն ես ֆարսիսն գացեր էի , ըսաւ
փառուս ժպիտով մը :

Ապահովապէս այս միջադէպին չէի սպա-
սիր . ամօթէս , յուզմունքէս եւ բարկութե-
կէս խեղաբար , առանց բառ մը արտասանելու
թեքինքս սենեակէն դուրս նետեցի :

Հոն չեմ գիտեր քանիերորով քատրիլն էր
որ կը պարէին : Գլուխները տաքցած էին
այլեւս եւ ոգեւորութիւնը ընդհանուր էր :

Երկու վայրկեան վերջը սենեակէն ներս
ակնարկ մը սպրդեցուցի եւ տեսայ որ խեղճ
Սաթէնը կուլայ կոր :

Միւս Սաթէնիկը անյայտ եղած էր , Յու-
րան :

Շատ դէշ կացութեան մէջ կը գտնուէի
կոր Սաթէնիկներուս հանդէպ եւ այդ երե-
կոյթը ուսերուս վրայ ծանրանալ սկսաւ :

Կաթէ նոր կարուած , աղու մը պէս սիրտս
կենդանար կոր :

Փորձեցի քիչ մըն ալ էրիկ մարդոց հետ
խանութիւն եւ մոռնալ նորածին բիրոյս նաւա-
թիթիթի :

Պարապ ջանք , խելքս միաքս ներսն էր :
Բանասիրու Սաթէնիկը , նախանձէ մըղ-
ուած , կ'երեւայ թէ գործը տեղն ի տեղօք
հասկցուցած էր Սամիկին որ միջոց մը ինծի
մտնիստով առ դիտողութիւնը ըսաւ :

— Հաւնեցա՞ր ըրածիդ . առ տեղ Պէյօղլու

չէ , տաանի աշափրանկայ բաներ հօնաեղ
կրլլայ . պարեմ տաանի խալթ պիտի ուտէիք
նէ թող վար իջնայիք :

— Առաջուց չըսէիր , ծօ' :

— Ես ի՞նչ կ'իտնամ :

Իր այս դիտողութիւնէն հասկցայ որ պար-
տաճանաչ ամուսին մը ըլլալու պէտք եղած
կերպսը կար այդ աղուն քով :

Պարելէ , ցատքելէ , երգելէ յոգնած , ար-
տէն վերադարձող եղան մը պէս կը Ֆիֆշար
Սամիկս եւ մետաքս թաշկինակով մը կը
սարկէր ճիտին ու ճակտին քրտինքները :

Առանց ոչ զնելու իր դիտողութիւննե-
րուն , ես նորէն համարձակեցայ սալոնէն
ներս սպրդիլ :

Կրկին Սաթէնները նորէն քովէ քով նըս-
տած էին :

Իբր թէ բան մը անցած չըլլար , ամօռս
դարձեալ մօտեցուցի իրենց :

Ինչպէս որ կը գուշակէի , սպասած ըն-
դունելութիւնս չի գտայ այս անգամ :

Հաղիւ ամօռս , տեղաւորած էի , նայիս
Սաթէնիկներու գոյգը իրենց ամօռը ետ քա-
շեցին՝ պատկառելի անջրպետ մը դնելու հա-
մար իրենց եւ իմ միջեւ :

Իրենց այս շարժումածքը պալ ջուր մը
իջեցուց զլիտուս , ամբողջ համարձակութիւնս
կորսնցուցի եւ առաջին անգամ ըլլալով ,
զլջաղի հոս եկած ըլլալուս : Կարծես բոլոր
հրաւիրեալները ծուռ ծուռ կը նայէին կոր
ինծի :

Բայց ես ի՞նչ գործ ունէի առ մարդոց մէջ ,
Աստուած իմ : Տաքութիւն եկաւ վրաս եւ
զգացի թէ շապիկիս ըլլաթրոնին տակ , սիրտս
ճմոր ճմոր կ'ըլլար կոր :

Երբ այս ծաղրելի կացութիւնը փրկելու
համար քչիկ մը ծռեցայ Սաթէնին հետ նո-
րէն խօսակցութեան մը բռնուելու համար ,
մայրը որ մինչեւ այդ վայրկեանին անուշ ա-
նուշ կը մրարէր կոր սէտրին մէկ անկիւնը ,
խոշոր խոշոր բացաւ աչքերը եւ խօսքը
աղջկանը ուղղելով — Քա Սաթէն , սանի
եկաւ նայիմ , բեւեռիքին քովը նստեր ես կը
մտիս , ըսաւ , մայրական կեղծ գուրգուրան-
քով մը :

Ա՛լ հասկցայ , այս սոււտէէն խեր չկար ,
նորէն դուրս ելայ սենեակէն :

Անդին գլուխները տաքցած էին , երգեր , շարգիներ , մանկներ , բոլքաներ եւ քատ-րիլներ իրարու կը յաջորդէին անդադար , ան-հատնում :

Գինի տեղ այլեւս օդի կը խմէին եւ խնձորի տեղ լահանայի թուրջի կը սպառէր օխաներով :

Ա՛յ , ես ուրկէ՛ց էր որ եկայ հոս ինկայ , բերան , Գառը-գիւղը նե՞ղ կու գար կոր , ասանկ բարեկենդանի շաւաթ իրիկուն մը :

Ա՛լ ճարահատ եւ յուսաբեկ , լաւագոյն բանը որ ինձի կը մնար ընե՛լ անկիւն մը քաշ-ուիլ եւ քնանալն էր :

Իմ այս փափաքս Սամիկին յայտնեցի եւ խեղճ աղան հազար ներողութիւն խնդրելով զիս առաջնորդեց զիմացի սենեակը՝ որուն սեփրին վրայ հինգ տասը հատ լակոտներ պառկեցուցած էին՝ մէյ մէկ բալթօ վրանին :

էն ծայրն ալ ես երկնցայ :

Առտուան մէկ երկու ժամ մնացեր էր , այսպէս կրնայի անցընել :

* * *

Կէս ժամ , մէկ ժամ ետքը , չեմ գիտեր , դուրսի արտասովոր աղմուկէն արթնցայ :

Տունը վար պիտի գար , ամէնքը ձեռք ձեռքի բռնած հօռաւ մը կը պարէին կոր :

Bouquet finalն էր ասիկա , apothéoseը այդ երեկոյթին :

Այդ ալ բան մը չէր ըսեր ինձի եւ որո-չեցի նորէն քուէս շարունակել :

Բայց այն միջոցին ուր զլուխս բարձին պիտի դնէի , քառակուսի ծալուած թուղթի կտոր մը աչքիս վարկաւ :

Սաթէ՛նն էր արդեօք որ կամացուկ մը այդ տոմսակը տեղաւորած էր բարձիս վրայ :

Սիրտս թաք թաք կը զարնէր . արդեօք ժամագրութիւնն մըն էր , ո՛վ գիտէ :

Խնթի պէս ամսակը բացի :

Ի՛նչ յուսախաբութիւն , ի՛նչ անկում :

Գիտէ՞ք ինչ կը պարունակէր այդ թուղթի կտորը :

Երկու տող ոտանաւոր :

Առ. Քրիզանթեմ

Հոս կը փնտռես հաց պանիր ,
Բայց մ'առնասիր ի նանիր :

Գում-գարուցիներուն ultimatumն էր ա-սիկա . գրական պատիւ մը՝ գրագէտի մը արուած :

Ատանկ աղետոր սկսուած հովուերգու-թիւն մը պանիր հացով պիտի վերջանար չէ՛ :

Մէկ Սաթէնը միւս Սաթէնին զո՛հ գացեր էր՝ զիս ալ մէկտեղ քշելով :

Այդ ի նանիրը անպատճառ ճիշտմիջն գիւտն էր , գրաւ կը դնեմ :

Այդ թուականէն ի վեր Գում-գարու ոտք դրած չունիմ . եւ եթէ օրին մէկը զիս հոն տեսնէք , այն ալ Պատրիարքարանէն ամուս-նալուծութիւնս խնդրելու համար գացած պիտի ըլլամ , հիմակուց կրնամ երաշխաւորել ձեզի , պայմանաւ որ . . . նախ ամուսնանամ :

ՔՐԻԶԱՆԹԵՄ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՄՆԵՐ (*)

Ե Ի

ՋԱՆԱՋԱՆ ԱՍԱՑՈՒԱԾՆԵՐ ՈՒ ՈՃԵՐ

—> ԶԱՆՈՋ <—

Ա..

Ա.մէն օր կուժը ջուր չի բերել :

Ա.մէն օր շիֆեր ըլլի չուառեր :

Ա.մէն օր սիւնալի քալօղը կիրակի օր լաթ չի գտներ հագնելու :

Ա.մէն օր տէրտերը դաթայ չուտեր , կամ՝

Ա.մէն տարպայ տէրտէրը դաթայ չուտեր :

Կամ՝ Ա.մէն օր տէրտէրը դաթայ չուտեր ,

օր մըն ալ իրիցկինը կ'ուտէ :

Ա.մայը չի գոռացած , Առտո՛ւած , Առտո՛ւած

չի ըսեր :

Ա.մայի գոռալնու կեօրայ անձրեւ չի դալ :

Ա.մային գոռալը թաթուեցու նշան է :

Ա.մայուր քալցածը՝ իրեն ամէնին չէն կ'անի :

Ա.մայ օրը փնթի կնկան ճաշն է , կամ՝ Ա.մայ

օր՝ պառուուն առտուն է :

Ա.մրան աղան վարդի տղայ , ձմրան տղան

մսխրի տղայ :

(*) Շարունակութիւն Թիւ 31 Մասիսէն :

Անձը՝ ամացողին համար է : Կա՛ն՝ Ամօթը մարդուն համար է :

Այլ ըսէ՛, չե՛մ ըսեր , — ըսէ՛, չե՛մ ըսեր , — ինչո՞ւ . — Վասն զի ետեւը քե՛ն ալ կայ զի՛ն ալ կայ :

Այլը տեսնայ մերսիլե՛ն կը կարծէ , բէ՛նը տեսնայ սատանայի չափու՛ն : Կա՛ն՝ Այլը տեսնայ , հօրը մօրուքին սանաթը կը կարծէ , Կա՛ն՝ Այլը տեսնայ ճիրափ , բէ՛նը տեսնայ մարդակ կը կարծէ :

Այլ է մատ , այլ է ճկու՛թ :

Այլոց համար լաց լինողը , իրեն աչքերից կը զրկուի :

Այնքան չեղար ինծի պէս , ո՛րքան զիս արիւր քեզի պէս :

Այսած սրտի չոր մխիթարանք :

Անգուն ջաղացքի քարն , էլ չի պահա գալիս : Անօթը՝ իշուն հեծցուցեր են ծուռ , աքին ձեռքն են տուեր , հարցուցեր են՝ ո՞ւր կ'երթաս . — ասեր է՝ հարսնիք կ'երթամ :

Անօթին երեսը թքեր են , թաթվէ էր կ'ըսէ՛ Կա՛ն՝ Արսըզին երեսն են թքեր , ըսեր է անձրու կուգայ :

Անամօթ հարսը ի մարանցը , ժեսան յարանցը : Անառակին տեղ չի կայ , ուր որ նստի նեղ կուգայ :

Անրանին սանձէն , մարդուն լեզուէն կը բռնեն : Ամբեր բարտին խակ սլորի :

Անգն ընկայ՝ մանգն ընկայ , ապաւանբուռ ճանկն ընկայ :

Անզը տե՛ս՝ կաւաւն ա՛ն , մէրը տե՛ս՝ աղջիկն առ : Կա՛ն՝ Մարը տե՛ս՝ աղջիկն ա՛ն , եղերքը տե՛ս՝ կաւաւն ա՛ն : Կա՛ն՝ Մէրն աչէ՛՛ աղջիկն ա՛ն , ֆեկարն աչէ՛՛ կաւաւն ա՛ն :

Անդունդը գնաց կապիկ բերելու :

Անէ՛ծքը կը դառնայ՝ անիծողին :

Անէ՛ծքը բերնէն ելլայ զլուխը թափի :

Անէ՛ծքը երկու բերանի թուր ա , հա՛ն զէսն է կտրում՝ հա՛ն՝ զէնը : Կա՛ն՝ Անէ՛ծքը երկու բերանով սուր է , ասդին ալ կը կտրէ , անդին ալ :

(Շարունակելի)

Կարգադրեց

ՏՐԻԱՏ ԵՊԻՍԿ. ՊԱԼԵԱՆ

ԲԱՌԱՐԱՆ. — Տապալայ = անգամ , Ամպուր = շատ , ուժով , Գէլ = գայլ , Ա = է , Հաւ = թուրքերէն՝ հէմ :



Ոչ մարմինըդ կուգեմ ես , ոչ ալ համբոյրըդ աղու .
Արցունքներդ ալ չեմ ուզեր . իսկ փու լեզուդ — սուր դանակ —
Բաւ ե ուրբան խուզարկեց սիրքս . միամիտ տղու
Հոգիս քիչ խաղալիք ցանկութիւններուդ անյազ :

Կրնայ ըլլալ որ խաբեն սարսուռները փու մարմնոյդ .
Արցունքներդ չեն կարող մաքել կրակը սրտիս ,
Իսկ խօսքերդ միտս , աւա՛ղ , շուտ կը ցնդին . փու սիրոյդ
Յուցադուրքիւնը չէ որ պիտի հրապուրէ գիս :

Որպէս զի ես համոզուիմ քե սիրեցիք գիս իրաւ ,
Նամակով մը պատմե ինձ , զգացումներդ ամբողջ ,
Խօլ տեսնանքդ կանացի որ փու գերիդ գիս ըրաւ .

Եթէ օր մը գիս մոռնաս , գոնէ ձեռքս ունենամ
Ապացոյց փու սիրոյդ , եւ ուրբան որ մնամ ողջ ,
Փու նամակիդ բոյրովը քո՛ղ կտեսնամ գինովմամ :

ՉՈՐ ԱՆԻՔՆԵՐԸ



Երկաթուղիին ճիշտ քովէն կը քալէ ձիւս . զոյգ սեւ զիծը , թեթեւ կտրութիւններով , կը փախչի կ'երթայ դաշտին մէջէն . երկու զիծերուն միջոցը , քանի հեռանայ կը նեղ-նայ կարծես ու վերջապէս տարտամօրէն իրարու հետ կը ձուլուին հեռուն , հեազհետէ պղտիկոյ հեռագրաթելի ձողերն ալ մէջեր-նին առնելով հոն : Երբեք ցր մը , հոսկէ կամ ուրիշ տեղէ , առանց առաւել կամ նուազ կարօտալից նայուածքներու զիտած ըլլալս չեմ յիշեր սա ճառքուն անզգայ զոյգ պող-պատը . միշտ , միշտ սրտէս ու հոգիէս բան մը պահած է ան իրեն մէկ անդիլի ծայրը , այդպէսով իմ նայուածքս միշտ իր վրայ մազնիսացնելու համար կարծես : Կ'երեւայ թէ սեւ աչքերուս սիրահար մըն է այդ պող-պատէ զիծը , պիտի ըսեմ — տխուր սիրա-հար սակայն , տխուր , չար ու անձնատէր :

Ասդիլի կողմս ցորենի արտերը կը տա-րածուին . կանանչին մէջ ոսկի թելեր իյնալ սկսած են տակաւ — քառասունը անցուկ մէ-կու մը մօրսքին պէս , որուն մէջ արծաթ թելեր կը սկսին սպրդիլ կամաց կամաց :

Կատարելապէս հարթ չէ ցանքը , տեղ տեղ խիստ անօտր ու անձրելի պակասէն խա-շած մասեր կ'երեւան , ուր առատօրէն բու-սած են վայրի ծաղիկներն ու խոտերը , իրենց անօգուտ ներկայութեամբ փոխարինել ու-ղելով կարծես անօտրութիւնը ցորենին — թանկագին գահարներու մէջ զետեղուած կեղծ քարերու պէս՝ որոնց սնչութիւնը փորձ ու-կերիչը առաջին անգամից կը կռահէ սակայն :

Եւ այդ զեղնորակ կանանչը , տափարակ դաշտին մէջէն , առջեւէս , կը տարածուի կերթայ դէպ ի հորիզոնը , որչափ որ զօրէ տեսնել նայուածքս , եւ աջ կողմէն ալ դէպի հեռաւոր պատերը քաղաքին դեռ երկարա-ձգուող արուարձանին պարտէզներուն :

* * *

Ստուերոտ իրիկուան ծոցէն պուտ մը հով կուգայ . արտին անկիւնէն հասկերուն զուլա-

ները ծոխ կը սկսին կարգաւ , իրարու ետե-ւէ . քիչ մը խռպոտ սուլումի մը նմանող խշարուքով մը : Այդ անշունչ բոյսերը կար-ծես կարգաւ կը ծնրադրեն բնութեան վիթ-խարի տաճարին մէջ , իրենց իրիկուան ա-ղօթքին համար , եւ այդ խշարուքն ալ միւս համառ մարմունջ մըն է օրհնելիքի՝ որ , հեազ-հետէ աւելի խուլ ու աւելի ատրտամ , կը տարածուի կ'երթայ անծայրածիր դաշտին մէջ , տեղ տեղ խռպոտ արտերով ընդմիջ-ուելով լսկ : Յետոյ , հովի ուրիշ հարուած մըն ալ նայնը կը կրկնէ դարձեալ :

Ոչ-հեղուկ ծով մըն է դաշտը , հանդարտ ու անծուփ , որ քմայքստ ալիքներ կ'ունենայ երբեմն երբեմն : Նուրբ ցօղուններ , ծանրա-բեռնուած հասկերուն բեռան տակ , կը կօքն եւ առաձգական մեղմ թափով մը կրկին կ'ու-ղիղնան իրարու ետեւէ :

Հովը քիչ քիչ չարունակական կը սկսի ըլլալ հիւսիսէն . խշարուքը միօրինաթիւն երկարաձգուող տարօրինակ մեղեդիի մը նմո-ցամանքը կ'առնէ : Հիմա , դաշտը քիչ մը աւելի մօտ է՝ ծովուն պատրանքը տալու . ալիքները , չոր ալիքները , կը սկսին կանո-նաւորուիլ , իրարու ետեւէ կուգան ալ , համաչափ հեռաւորութիւնով մը : Ո՛ր է սա-կայն փրփուրը , ճերմակ , սիրուն փրփուրը . աչքերս ի զուր կը փնտռեն գայն կանանչին մէջ , մինչեւ հեռունները , հեռունները . ո՛չ , չկայ . առնաք , առ չոր ալիքները , իրար վն հալածեր ծովուն ալիքներուն պէս , չեն ու-սիր , չեն փլչիր իրարու վրայ , պղպշտիկներ արտադրելու համար իրենց հեղուկ փչրանք-ներով ու փլուզումներով : Պահ մը խաբիլ կ'ուղեմ ինքզինքս , կ'երեւակայեմ թէ կա-նանչ հեղուկ ծովու մը կոհանքներ ըլլան-որվոնք , ու հեռուէն եկող մէկ հատին կը հե-տեւիմ նայուածքովս , ինքզինքիս կաթնի տալով թէ , քովս համեմուն՝ արդէն սոհ-մանէն դուրս պիտի նետուի , եւ որովհետեւ ճիշդ եղբրքը կը քերթմ կ'անցնիմ կանանչին , ձիուս օտքերը պիտի դայ թրջել : Այնպէս չըլլար սակայն . չոր ալիքը , արտին ծայրը համեմուն , յանկարծակի կանգ կ'առնէ հոն , էն առջեւի ցօղուններուն ձեւովն ու վերս-տին կանգնելովը , Յուստիտաթութիւն :

եւ յետոյ , ինքն ալ կտրծես զիս յուսա-
խար ըրած ըլլալը զգալով , այդ չոր ալիքը ,
հիմա ալ աւելի նրբացած , ալ աւելի տար-
ած իր խշրտուքը ետ կ'առնէ կը տանի ,
զաշտին լայն տարածութեանը մէջ աստիճա-
նաբար հասցնելու համար զայն , — դաշնակիին
կամոց կամոց մարտը նուրբ մէկ խաղին պէս :

* * *

Գիշերուան հեռզհեռէ թանձրացող ըստ-
ուերը իր ծոցին մէջ առած բերած է հովը ,
եւ քանի իր խաւերը բացուին , քանի գիշերը
բառալանայ՝ հոյն ալ նոյն համեմատութեամբ
կը սաստկանայ :

Չոր ալիքները կը լայնանան դաշտին մէջ ,
ասանց կարենալ աւելի մեծնալու , առանց
որչա՞ն համանէն անդին բարձրանալ կարենա-
լու ստակայն , որովհետեւ ցօղունները կը կա-
պեն զիրենք դաշտին յատակին : Միայն տա-

րածութիւննին կ'ընդարձակուի ու ընթացքնին
աւելի կ'արագանայ :

Իրենց չոր խշրտուքն ալ , շատ մը օձերու
վժլտութիւն պէս , աւելի միօրինակօրէն ու
աւելի ուժգնապէս կ'երկարածողուի հիմա .

— Խը՛չչչ . . .

Կը սպասեմ որ անոնք գան երկաթուղիի
բարձր ճամբան կանգնած քարափին զար-
նուին ուժգնակի , իրենց կատաղի թափովը ,
իրենց ետ մղուած ուժգնութեանը մէջ , զայ-
րայթէն , սիրուն ճերմակ փրփուրի անձրեւ
մը պոսթիկալու համար : Ո՛չ : Մինչեւ ճամ-
բուն եզերքը կը հասնին միշտ , ու հանկէ ետ
կը դառնան , թո՛յլ ու տկար : Չորացած ալիք-
ներ՝ որոնց ջիզը , խանդը կը պակսի — չոր-
ցած սրտերու պէս՝ որոնք սիրոյ խոչընդոտ-
ներու զէմ մինչեւ որոշեալ տեղ մը կեր-
թան միշտ , ու հոն . . . կը կենան , ետ զառ-
նալու համար ուժաթափ :

Չեմ սիրեր ես ասոնք , աս չոր ալիքները :

ՓԱՅԼԱԿ

ԵՐԵՔ ՏԱՐԻ ԱՐԺԱՆԹԻՆԻ ՄԷՋ

ՌՕՄԷՆ ՏՕՐԻՆԵԱՔԻ ՌԻՂԵԻՈՐԱԿԱՆ ԱՐԿԱՇՆԵՐԸ

— Մտածէ՛ անգամ մը , չեմ կրնար այս-
պէս ձեռքերս պարապ իմ ցեղին քով վերա-
դառնալ : Իրաւ է որ քիչ մը բան ունիմ հետս՝
մը մարդոց նուիրելու համար , բայց ատիկա
չբաւեր : Մեր մէջ , աւանդական սովորու-
թիւն մը կայ՝ զոր անպատճառ պէտք է յար-
գել . ցեղին մարդոցմէն մէկը երբոր հեռանայ ,
ասանց մեծաքանակ աւարի չի կրնար վերս-
ան իրեններուն քով վերադառնալ : Պէտք է
որ քեզ իբր գերի մը ներկայացնեմ իմ մօրս ,
բոլորով թէ Սպանիացի մըն ես , մէկը անոնցմէ՝
զորս մեր ցեղը այնչա՛փ կ'ատէ : Ան ատեն
մերեւս ներէ ինծի :

— Մինչեւ հոտ աղէկ , բայց անկէ ան-
դին . . . ի՞նչ կը կարծես որ ընեն զիս :

— Օ՛հ հանդարտէ՛ , եթէ երբեք որոշեն քեզ
մոռցնել , կը խոստանամ ես ինքս քեզ սպան-
նել որովհետեւ կը երկարատեւ ու ահալի տան-
կեմքերու չենթարկուիս :

Տօմէնկոյի այդ յայտարարութիւնը ան-
չուշտ կը հասկնաք թէ որչա՛փ շփոթութիւն
պատճառեց ինծի : Մանաւանդ որ համոզ-
ուած էի թէ լրջօրէն կը խօսէր : Արդէն
Հնդկիները կատակ չեն ընել բնաւ :

Տօմէնկօ ալ իր կարգին ո՛չ նուազ անել
կացութեան մը մէջ կը զգար ինքզինքը :
Յտնկարծ , գաղափար մը արթնցաւ մաքին
մէջ , եւ ըսաւ .

— Հաւանէ՛ , ի՞նչ կ'ըլլայ , մասունքը որ
քեզ փրկեց կապաշտներու սարին փորձու-
թիւններէն , մեր ցեղակիցներուն քով ալ
անչուշտ քեզ փորձանքէ ազատ պիտի պահէ :

— Ո՛չ , ո՛չ , պատասխանեցի իրեն . որով-
հետեւ աղէկ բան չէ շարունակ մասունքի մը
օգնութեան ապաւինիլ . մարդ միշտ չի կրնար
անկէ օգնութիւն ակընկալել :

Այս պատասխանս զարմանք առթեց Տօ-
մէնկոյի , որ սկսաւ երկար բարակ հարցում-

ներ ուղղել ինծի, հարցումներ՝ որոնց ականջ
անգամ չէի տար: Ինծի համար իրողութիւնը
սա էր որ Հնդկիւր մէկդի չէր թողուր իր
մտադրութիւնը: Միւս կողմէ, շատ հաւատք
ալ չունէի մասունքիս ամենակարողութեան
նկատմամբ, ու գիտէի որ ապագային ենթար-
կուելիք տանջանքներէս բնաւ չպիտի կրնար
զիս ազատել:

Ամբողջ երկու օր վիճարանեցանք այդ-
պէս: Կը դգայի թէ տակաւ առ տակաւ Տօ-
մէնկոյի ծննդավայրին կը մօտենանք: Պէտք
էր վերջնական կարգադրութիւն մը ընել
մինչեւ հոն չհասած:

— Ծնորհակալ եմ, ըսի հնդիկին, այն
անձնութիւններէն համար որով զիս պաշտ-
պանեցիր մինչեւ այսօր. տեղն է որ ես ալ
չընդդիմանամ քու փափաքիդ: Սիրով կ'ա-
զատեմ քեզ երդումէդ, բայց մէկ պայմանով
մը. երկու օր պայմանաժամ տուր ինծի, եւ
անկէ անդին ուղածիդ պէս վարուէ ինծի հետ:
Մնաց բարով ուրեմն. դուն ուր կ'ուզես
գնա. ես ալ իմ ուղած կողմս կ'երթամ:

Աս ըսելով դարձուցի ձիս եւ սկսայ ա-
ռաջ սուրալ՝ վերջին անգամ մըն ալ պոռալով:

— Երկու օրէն . . .

Տօմէնկօ պահ մը ուղեց ետեւէս վազել,
բայց քիչ մը մտածելէ վերջ ետ կեցաւ այդ
մտադրութիւնէն: Յայտնի էր որ ամբողջ եր-
կու օրուան միջոցին չպիտի ուղէր բնաւ զիս
հալածել:

Երբոր բաւական բացուեցաւ, կանգ առի
քիչ մը շունչ առնելու համար: Երկու օր-
ուան պայմանաժամը մեծ առաւելութիւն մը
չէր տար ինծի: Տօմէնկօ երկու օր վերջ
ղիւրաւ պիտի կրնար ետեւէս հասնիլ, քանի
որ իրեն համար ո՛ր եւ է հետքի մը հետեւիլը
շատ դժուար բան մը չէր: Փրկութեան միակ
միջոց մը ունէի, կարելի եղածին չափ արագ
յառաջանալ:

Խօտին վրայ երկնցայ քիչ մը առնել, եւ
ձիս ազատ թողելէ վերջ, ծառի մը կոթնե-
լով սկսայ երազել:

Է. ԳԼՈՒԽ

Նոր վտանգ մը. — Յայտնութիւն հնդիկներու. — Բա-
ակցութիւն՝ ծառին վրայէն. — Հրացանի հարուած մըն

որ պարապը կ'երթայ. — Ծառն ի վար, օդին մէջ. —
Հնդիկները ինչպէս կը գուարճանան. — Տօմանի ձած.
ըրդութիւն դէպի հնդիկներու բանակետը:

. . . Մինչդեռ ես այդպէս կ'երազէի ծա-
ռին տակ, ձիս որ ինձմէ քանի մը քայլ ան-
դին կը ճարակէր, եւ որուն վրայէն սանձն
ու թամբը հանած էի, սարսափահար քովս
եկաւ եւ սկսաւ վրնջիլ: Անպատճառ վտանգ
մը կը սպառնար ինծի: Անմիջապէս օտքի
ելայ, եւ սկսայ չորս զիս գննել, բայց խո-
տերը ա՛յնքան բարձր էին չուրջս որ չկրցայ
բան մը տեսնել: Ան տեսն ախանջ գետնին
փակցուցի եւ հասկցայ իսկոյն թէ ձիւնոր-
ներու խումբ մը իմ կողմս կը սուրայ:

Իսկոյն ձիս ինծի քաշեցի ու փորձեցի
սանձը բերնին անցնել, բայց անպիտանը
կողմնակի շարժումով մը ձեռքէս ազատելով
սկսաւ փախչիլ: Ժամանակ չունէի զինքը
հետապնդելու համար: Զիւնորները կը մօ-
տենային: Անմիջապէս հրացանս տոբի եւ ծան-
ի վեր մազլլեցիւով, սպասեցի:

Հնդիկները, որոնք տեսած էին շարժումս,
կանգ առին եւ սկսան խորհրդակցիլ: Առի-
թէն օգտուելով սկսայ զիրենք գիտել աղա-
տօրէն: Բռանըհինգի մը չափ կային, աւէնքն
ալ շատ գեղեցիկ ձիերու վրայ հեծած, եւ
կռնակներն անցուցած վայրի գազաններու
մուշտակներ որոնք պարզապէս սոսկում
պատճառեցին ինծի:

Յանկարծ, հնդիկներէն մէկը դէպի իմ
կողմս դալ սկսաւ, ձեռքը բռնած ատրճանակ
մը՝ որուն փօղը գետնին ուղղած էր: Երբոր
քսան քայլ մը մօտեցաւ, ձայնեց շատ գէշ
սպաններէնով մը:

— Վա՛ր իջիր, բան մը պիտի ըսեմ քեզի:

— Չեմ իջնիր, պատասխանեցի իրեն, եւ
թէ երբեք բան մը պիտի ըսես, ատկէ ալ
կրնաս ըսել:

Հնդիկը բանիւր մը մուտաց, բայց այնպի-
ցած ձայնով որ չկրցայ լսել:

— Չեմ հասկնար, պատասխանեցի իրեն:

Միւսը ուշադիր իմ ձիւն կաղամբը կը
դննէր: Պահ մը ձեռքը տնոր երկարաց,
բայց սպառնացայ հրացանս իր վրայ պարպել
ինչ որ վարանք տեսաւ իրեն:

Յետոյ, կրկին ինծի դարձաւ եւ հար-
ցուց.

— Ո՞վ ես դուն :

— Քեզի՛ ինչ , ըսի իրեն :

— Ո՞վ ես դուն , կրկնեց խորիստ չեչառով մը :

— Օտարական մըն եմ :

— Ա՛հ , եւ ի՛նչ ազգէ , սպանիացի մը անշուշտ :

Անունները սկսան վառիլ տառերով եւ անորոշապայտութեամբ մը : Ի՛նչ մը տառն մտածեց , եւ անմիջապէս վերջ տարճանակը բարձրացնելով փողը ինծի ուղղեց : Իսկոյն հաստ խճի մը ետին սպաստանեցայ եւ իմ կարգին հրացանս իրեն ուղղեցի : Հասկցաւ որ առաւելութիւնը իմ կողմս էր , եւ ատրճանակը խոնարհեցնելով կրկին սկսաւ զիս հարցափորձել :

— Ո՞ր ցեղին կը պատկանիս :

— Ֆրանսացի եմ , պատասխանեցի :

— Ֆրանսացի—սպանիացի , անանկ չէ՞ :

— Ո՛չ , Ֆրանսացի , զուտ Ֆրանսացի :

— Միեւնոյն բանն է , ըսաւ , միշտ իր իրոխտ չեչառով :

Յետոյ աւելցուց .

— Ի՛նչ ընելու եկած ես այս կողմերը :

— Ձէ՛ք տեսներ , կը չըջագայիմ :

— Ձեր կողմերը այսպէս ծառերու վրայ կը չըջագային :

— Ես իմ հաճոյքիս համար կը չըջիմ , պատասխանեցի իրեն , ինծի համար ծառ , դաշտ , լեռ միեւնոյն բաներն են :

Պատասխանս սակայն՝ կ'երեւայ թէ չգոհացուց զինքը , որովհետեւ գէմքը կրկին բարկութեան արտայայտութիւն մը առաւ :

— Կը ստես կոր , անպիտան սպանիացի , ըսաւ քիչ ետքը , չո՛ւն , կը ստես կոր , դուն ես եկած ես կայք մը հաստատելու եւ այդ անպիտան օտարականները այստեղ փոխադրելու նպատակով :

— Ետեւը դո՛ւն ես , ըսի , ես ինքս նոյն լափ մը բարկացած , եւ հրացանս վրան ուղղելով կրակ ըրի :

Հարուածը սակայն վրիպեցաւ , որովհետեւ նոյն վայրկեանին իսկ շածծօրի մը հանդիպեց ուղղութեամբ մէջքիս վրայ : Մեր խօսած միջոցին ուրիշ Հնդկներ ծառին միւս կողմը անցնելով վատարար կաշկանդած էին զիս : Քիչ ետքը , չուանը քաշեցին , եւ այդ-

պէս ծառին մէկ հաստ ձուլէն կախուած մնացի օդին մէջ :

Միեւնոյն պահուն , Հնդկները ձիւս կապոցներուն վրայ խոյացան , եւ ականթարթի մը մէջ բաժնեցին ամբողջ ինչքս : Յետոյ , իրենցմէ ան՝ որ ինծի հետ խօսած էր , եւ որ պետերին կ'երեւար , նշան մը ըրաւ , որուն վրայ բոլոր ձիւսներն ալ մէյ մէկ քիչ հեռացան եւ սպասեցին՝ ձեռքերնուն մէջ ձօճելով իրենց սուր նիզակները :

Ձէի գիտեր թէ ի՛նչ պիտի ընէին , բայց արդէն իսկ սկսած էի մահուան պատրաստուիլ :

Մուսթին պետը նոր շարժում մը ըրաւ : Ատոր վրայ , ձիւսոր մը խթեց ձին , եւ ինձմէ քանի մը քայլ անդին կենալով , ուժով մը նետեց նիզակը , առանց զիս վիրաւորելու : Պահ մը կարծեցի թէ այդ կերպով պիտի սպաննեն զիս , բայց իսկոյն հասկցայ թէ անոնք աւելի նշանաւորութեան փորձ մը կ'ընէին՝ քան թէ կը փափաքէին զիս սպաննել : Առաջին ձիւսորին երկրորդ մը յաջորդած էր , յետոյ երրորդ մը , եւ ամէն մէկը կ'աշխատէր կարելի եղածին չափ իմ մօտէս անցընել նիզակը , առանց զիս վիրաւորելու : Մասնաւորաբար կ'աշխատէին որ իրենց նիզակը զլխէս երկու մատ բացէն անցընեն , եւ կը յաջողէին ալ :

Սարսափը համակած էր զիս եւ շարժում մը անգամ չէի ընել , վախնալով որ նիզակ մը կը մտնէ մարմնէս ներս , բան մը՝ որուն արդիւնքը մահէն ուրիշ բան չէր կրնար ըլլալ անշուշտ :

... Ետեւը չեմ կրնար ըսել թէ որչափ ժամանակ անցաւ այդպէս : Պահ մը ուրիշ ձիւսներ ալ եկան միմեալ առջիններուն , որուն վրայ տանջանքս դադարեցաւ : Նորեկներէն մէկը ձիւս վրայ ոտքի ելելով , սուրի միակ հարուածով մը կտրեց զիս ծառին կապող չուանը : Գրեթէ զգայազրկ գետին ինկայ , եւ երբ նորէն աշուրներս բացի , տեսայ որ ատրճանակով մարդը զիս կը կաշկանդէ հաստ չուանով մը :

Ալ գիմանալու կարողութիւն չունէի :

— Մեղուցէ՛ք զիս , ըսի իրեն , ի՛նչ պէտք այսպէս տանջանքս երկարել :

— Պիտի մնացնենք՝ բայց ո՛չ հոս , պատասխանեց :

Յետոյ յարեց ստղաշէլի ժպիտով մը .

— Թողէրիային (բանակետողին) մէջ . պէտք է որ մեր կիները զուարճանան եւ սորվեցնեն իրենց զաւակներուն թէ ինչպէ՛ս պէտք է վարուիլ Սպանիացւոյ հետ :

Այդպէս կապուած , ձիւ մը վրայ առին զիս : Յետոյ , կատաղի վազքով մը սկսան յառաջանալ դաշտին մէջէն :

Այդ ո՛չ նախանձելի ճամբորդութիւնս վերջին ծայր տաժանելի եղաւ ինծի , ու չիտակը պահ մը զվշացի Տօմէնկոյէն եւ Օնօրիոյէն բաժնուելու համար : Բայց ինչ օգուտ : Կէս գիշերուան մօտ վերջապէս հասանք Հնդկիներուն բանակետող : Անպիտանները կապոցի մը պէս զիս վար նետեցին ձիէն : Բաղխումը ա՛յն ապսիճան զօրաւոր եղաւ որ կորսընցուցի ինքզինքս :

Ը. ԳԼՈՒԽ

Ճանիճի մը մէջ . — Հնդիկներու լաճերը . — Ազատման երեք միջոցներ . — Ուր Ռօմէն տ'Օրինեաք վերջ ի վերջոյ կրնայ ստամոքսը լռեցնել . — Դեպի տանջանքի վայրը . — Հնդիկներու պետը . — Աղեղի առաջին երեք ճարտաճաները . — Լոյսի անձրեւ մը՝ որ ճիշդ ատենին կը հասնի . — Ազատում քէ կորուստ :

Երբոր աչուըններս բացի , ինքզինքս գտայ ճահիճի մը մէջ : Ձիս կաշկանդող չուանը չէին քակած . ջերմէ բռնուած մարդու մը պէս կը դողայի : Ամէն աեսակ մտածումներ սկսան խռովիլ զիս : Ինչո՞ւ համար այդ ճահիճին մէջ նետած էին զիս : Պիտի խեղդէի՞ն արգիւթ : Եթէ երկար տոհն մնայի այդ ճահիճին մէջ , բնաւ պէտք չպիտի մնար իրենց միջամտութեան . ջերմը ինքնին պիտի կարենար մեռցնել զիս :

Այս մտածումներուն մէջ էի , երբ հնդիկ մը երեւցաւ յանկարծ , Ջեռքը , վայրի գազանի մը մարթով շինուած թոյլ մը կար : Երբոր ինծի մօտեցաւ , թոյլը վրաս պարպեց , եւ հեռացաւ գնաց՝ առանց իսկ բառ մը արտասանելու : Քիչ ետքը , տակաւին ինքզինքս չգտած , կրկին վերադարձաւ , եւ նոբէն ձեռքի թոյլը զլխէս վար պարպեց :

Կարծեցի որ զիս խեղդել կ'ուզէին , եւ աշխատեցայ տաքի ելլելու , բայց կապերս

ա՛յն աստիճան սեղմուած էին որ հազիւ կրցայ պզտիկ շարժում մը ընել : Հնդիկը ապահովուելով ո՛ր մնաւած չեմ , քանի մը անհասկնալի բառեր արտասանեց եւ մեկնեցաւ գնաց :

Երկար ատեն ի գուր իրեն սպասեցի : Սոսկալի անօթութիւն մը կը տանջէր զիս , եւ եթէ երբեք ձեռուըններս ազատ ըլլային , չպիտի վարանէի շուրջս գտնուած ամէն բան ուտելու : Յանկարծ , բազմաթիւ սոցոց կանչեր լսեցի , ուր , կատաղի կանչեր՝ որոնք երթալով ինծի կը մօտենային : Անոթեալէս վերջ , հարկւրաւոր պզտիկ Հնդիկներ երեւցան իրենց մայրերուն հետ , եւ զիս դուր հանեցին ճահիճէն : Կարծեցի թէ ազատած էի , եւ անօթի ըլլալս յայտնեցի կիներուն : Տղաքը սակայն , որոնք կ'երեւայ թէ բնաչէին հետաքրքրուէր իմ անօթութեամբ , վրաս յարձակեցան , եւ սկսան չէնք շնորհ տանջել զիս : Մէկ քանին ծայրը սուր եղէդներով միտս կը ծակծկէին . ուրիշներ խոշոր փուշերով : Մայրերնին կը քաջալերէին զիրենք անխտիր : Այս նոր տանջանքն ալ քառորդուան մը չափ տեսեց : Ի վերջոյ , Հնդիկները վրայ հասնելով զիս ազատեցին , եւ կապերս քակեցին : (Շարունակելի)

Մասիսի խմբագրութիւնը իր ցաւակցութիւնները կը յայտնէ ծանօթ հրապարակապէր Արամ Անտոնեանին որուն մեծ-մայրը , այլիճիկին Նոյնմզար Յակօբեան , մահկանացուն կնքեց խոր ծկութեան հասակի մէջ , Յուդարկաւորութիւնը կատարուեցաւ երկուշաբթի , Բանկալիթիի Ս. Լուսաւորիչ եկեղեցին , աղգակահներու եւ բարեկամներու ներկայութեամբ : Հանգուցեալը առաքինի կնոջ մը համարը վայելած էր միշտ եւ յարգուած ամէնէն :

Վերջին անգամ ըլլալով կը խնդրեմ մեր գաւառային գործակալներէն որ փութան Մասիսի բաժանորդագրութեանց մնացորդ գանձումները դրկել ու հաշիւները փակել :

Արսօնուսէր Կ. Ս. Իիթիիճեմն

Տպագրութիւն Ե. ՄԱՏՈՒԷՈՍԵԱՆ
Կ. Պոլիս , Յինճանըրար եօղուշու , թիւ 27

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՊԱՐՏԻԶԱԿ

Վարժարանիս նոր տարելիջանը կը սկսի Սեպտ. 10 (Ն. Տ.) Դշ. : Տարեթոշակն է գիւնթիթիկներուն համար 16 ոսկի օսմ. որուն վերջը վճարելի է սեպտեմբերի սկիզբը, եւ միւս վերջը յունվարի մէջ :

Վարժարանիս Տնօրէնին որդին, Մր. Ռ. Զեմպրա, Քանաւայի մէկ նշանաւոր համալարանին մէջ փայլուն ընթացք մը աւարտելէ եւ Ուսուցիչ Արուեսից տիպոգրֆին արժանալէ վերջ, կը վերադառնայ յառաջիկայ տարի, ստանձնելու համար հաստատութեանս Ազգիներէն դասերուն մեծագոյն մասը, նախապատրաստական կարգերէն մինչեւ բարձրագոյն կարգը, եւ աշակերտները վարժեցնելու համար այդ լեզուաւ ինչպէս գրելու նոյն պէս խօսելու մէջ. իր դասախօսութեան լեզուն պիտի ըլլայ միայն Անգլիերէն : Միեւնոյն ժամանակ, պիտի շարունակուին անգլ-ւայ. թարգմանութեան վարժութիւնները ընդհանրապէս խնամքին տակ :

Վարժարանիս պարտէզին կցուեցան վերջերս ընդարձակ գետիններ, որոնք նոր գիւնթիթիկներ պիտի տան աշակերտներուն զբօսանքի ժամերը աւելի հաճելի ընելու :

Աւելի տեղեկութիւններու համար գիմել Մր. Ռ. Ռիթի, Պայպըլ-Հաուս, Կ. Պոլիս, կամ վարժարանիս Տնօրէն Տր. Ռ. Զեմպրաի, նամակները ուղղելով Պայպըլ-Հաուս :

ԱՏԱՍՆԱԲՈՅԺ

ՏՈՔԹ. Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵԾ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 200

Կալաթա-Սերայի Լիսէին դէմ

ԳԵ. ՆԵ. ՇԲ. օրերը առաւօտեան կանուխէն մինչեւ իրիկուան Ժ. 11 1/2

ԲԵ. ԴԵ. ՈւԼ. օրերը 6 ԿԵ մինչեւ 11 1/2

Կիրակի օրերը ժամադրութեամբ

ԻԻՆԻՈՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ՃԻԻՂ

Մինչեւ 1899ի վերջը հաստուցեալ շէնսք	240.000.000 ֆր.
1899ին գանձուած ապահովագրին	19.500.000 »
Դրամագլուխ եւ պահեստ	105.000.000 »
Ապահովագրեալ դրամագլուխ	18.000.000.000 »

ԿԵՆԱՑ ՃԻԻՂ

Մինչեւ 1889ի վերջը հաստուցեալ շէնսք	99.000.000 ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253.000.000 »
Դրամագլուխ եւ պահեստք	150.000.000 »

Որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Ինիոն»-ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ :

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց գեղչեալ գիներով : Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո'ր եւ է ընկերութեան պայմանները : Եահաբաթիւններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Ինիոնի ապահովագրուողք ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ Եահաբաթիւններու բաղման (accumulation des bénéfices) ՅՈՌԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին :

Ընկերութեան գրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԺԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տօրեկներէն

Կ. Պոլիս, Կալաթա, Թահեսայութուն խան, Օսմ. Պանֆայից դիմացը

Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

Ա Պ Ա Ռ Ի Կ Վ Ա Ջ Ա Ռ Ո Ւ Մ

ՎԱՃԱՍՈՒՄՆ ԶԵՐՔԱՅԻՆ



Ա Պ Ա Ռ Ի Կ Վ Ա Ջ Ա Ռ Ո Ւ Մ
Յաճախողաց դիմումներն
համար

ՎԵՐՋՆԵ ԳԻՆԵ

Եթէ կ'ուզէ՞ք ամէն
տեսակ գոնարեղէններ
ունենալ. գիտեցէ՞ք
կ. Պոլիս, Ոսկերչաց
Շուկայ մեծ փողոց թիւ 13

Հերմայի վաճառատունը ունի եւրոպական
հաշակով պատրաստուած գոնարեղէններ,
ամենքն ալ առաջնակարգ ըլլալու պայմանաւ,
Հերմայի վաճառատուն գինեղն անմիջեղի են.
Հերմայի վաճառատունը ունի արծաթեղէն
առարկաներ,
Հերմայի վաճառատունը ունի ժամացոյցներ
եւ արծաթեայ գաւազաններ (պապօրն),

Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր

Հարիւրին քսան կանխիկ, մնացեալին հա-
մար շարաթիկան հարիւրին հինգ վճարում,
Կանխիկ գնողին համար 100ին 5 գին,
Գործածուած գոնարեղէններ՝ եթէ քան-
ուած չեն՝ 100ին 10 գինով ետ կ'առնուին.



Ջեռքի, ետքի և ձեռքի ուսի
միանգամայն մեքենաներ
կը գոցուին:

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի
մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքե-
նայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը
անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ
դժգոհութեանց եւ տալիսունի աղբիւր մըն է:
Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն
աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ
դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի
մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառ-
տանց մէջ:

ԲԵՐԱ, Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դիմաց.

ԿԱԼԱԹԱ } 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաբէօյ, Թրամպէլին կայարանին Դիմաց

ՊՈԼԻՍ } 1. Սուլթան Համամ.
2. Սուլթան Պէյազիտ.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կատարեալ երաւիստորութիւն

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր հաղաճներուն մէջ

ՇԱՐՔԱՅԻՆ
ՄԱՍՆԱՎԱՋԱՐՈՒՄՆԵՐ